

Մոլորությունից ազատագրության աղոթք

Շնորհակալ եմ քեզ, Հա՛յր, որ դու ճշմարտության Աստված ես, որ քո լույսը փայլեցնում ես ամենախավար գիշերվա մեջ: Այսօր ես որոշում եմ ոչ ասել խավարում ապրելուն և ապրել քո լույսով:

Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ իմ ասած ամեն սուտ խոսքի համար: Ես շատ հաճախ եմ փորձել հեշտ ու հանգիստ ապրել և իմ իմացած ճիշտն անգամ չեմ արել: Խնդրո՛ւմ եմ, Տե՛ր, մաքրի՛ր շուրթերս ամեն անաստվածությունից: Ինձ ճշմարտությունը սիրող սի՛րտ ու ճշմարտությունն ասող շուրթե՛ր տուր:

Ինձ քաջություն տուր հաշտվելու ճշմարտության հետ ու մերժելու սուտը:

Այսօրվանից ես հրաժարվում եմ սուտ խոսելուց:

Ես մերժում եմ իսլամական բոլոր ուսմունքները, որոնք արդարացնում են սուտ խոսելը, ընդ որում նաև՝ «տաքքիյա»-ն: Ես շրջադարձ եմ կատարում ստից ու խաբկանքից և ձգտում ապրել ճշմարտությամբ:

Ես հռչակում եմ, որ Հիսուս Քրիստոս ինքն է Ճանապարհը, Ճշմարտությունն ու Կյանքը: Ես որոշում եմ ապրել նրա ճշմարտության պաշտպանության ներքո:

Ես հռչակում եմ, որ իմ ապահովությունը քո մեջ է, և ճշմարտությունն ինձ կազատի:

Խնդրո՛ւմ եմ, երկնային Հայր, ցույց տուր ինձ՝ ինչպես ապրել քո ճշմարտության լույսով: Թո՛ւ՛յլ տուր քո ճշմարտության խոսքերը խոսեմ և քո ճշմարտության մեջ ապրեմ: